ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

07.12.2021 17:46

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հյուրընկալել է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարության Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության համագործակցության ծրագրերի բաժնի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության պատվիրակությանը:

Այցելության նպատակն էր քննարկել Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2019-2022թթ. գործողությունների ծրագրի՝ ԵԽ համակարգմամբ իրականացվող տարածաշրջանային ծրագրերի ընթացքը, ինչպես նաև նախատեսվող առաջիկա համագործակցությունը:

Պատվիրակության կազմում էին Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը, համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավար Լիլյա Գրետարստոդիրը, համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ Լիլիթ Դանեղյանը և ծրագրի ղեկավար Կարեն Կարապետյանը:

ՀՀ փաստաբանների պալատը, արժևորելով փոխհամագործակցության նմանատիպ այցերը, բարձր է գնահատում Եվրոպայի Խորհրդի դերը մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև փաստաբանական ինստիտուտի զարգացման նպատակով միջազգային լավագույն փորձի ներդրմանն ուղղված քայլերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՍՏԱՊԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })